5-8/ 96/ 2023

Ortr

ORER\ DNY \ - Arménsko - evropský časopis
Armenian European Magazine | Եվրոպական անկախ ամսագիր

Հայագիտությունը Եվրոպայում
Armenian Studies in Europe



Հայագիտության նվիրյալ նահապետը.

Լեւոն Արքեպիսկոպոս Զէքիեան

«Մխիթարը եղած է բովանդակ կեանքիս ներշնչումի ակնաղբիւրը եւ հիմնական ուղեցոյցը»

Եվրոպայի հայագիտական կրթության հիսունից ավելի մշակների բացառիկ հարցազրույցները ՕՐԵՐ-ի այս համարում

Բալինտ Կովաչ. «Մեր ամբիոնի շնորհիվ հայագիտությունը շուտով ավելի տեսանելի կլինի միջազգային գիտական կյանքում»

Հայագետ, պատմաբան, Պետեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ Բալինտ Կովաչը պատասխանում է ՕՐԵՐ-ի հարցերին

Կենսագրական

Բալինտ Կովաչը ծնվել է հունգարական Կիսաչոժ քաղաքում, ավարտել է Վեսպրեմ քաղաքի դպրոցը, ապա Պազմանի Պետեր համալսարանը: Ուսանողական տարիներին 2000 ականների սկզբին կաթոլիկ համալսարանում ուսումնասիրել է հայկական մշակույթը: Այդ տարիներին դասախոսություններ եւ համաժողովներ են կազմակերպել պրոֆեսոր Շանդոր Օզեի ղեկավարությամբ: 2002թ Տրանսիլվանիայում՝ Հայաքաղաքի (Արմենոպոլիս) հայ կաթոլիկ եկեղեցում ուսումնասիրել է հայկական գրադարանը, ներշնչվել է այնտեղ առկա ձեռագրերով, որոշել է սովորել հայերեն: Նախ հայոց լեզուն խորապես ուսումնասիրել է գերմանական Հալլեի համալսարանի հայկական բաժնում՝ դոկտոր Արմենուհի Դրոստ Աբգարյանի ղեկավարությամբ, ապա 2008թ մեկնել է Հայաստան, ուր շարունակել է ուսումը: Այնուհետեւ վերադարձել է Հունգարիա եւ Պազմանի Կաթոլիկ համալսարանում պաշտպանել է իր դոկտորական թեզը՝ Տրանսիլվանիայի հայկական գրադարանների հայկական ժառանգության թեմայով: Գիտական հետազոտություններ է անցկացրել նաեւ Վատիկանի եւ Հռոմի գրադարաններում: Այդ տարիներին եղել է նաեւ Արցախում, որից հետո Ադրբեջանի իշխանությունների կողմից հայտարարվել է անցանկալի անձ:

Նա նաեւ համակարգել է 2013թ. հունգարահայությանը նվիրված մեծ ցուցահանդեսը, որին կից հրատարակվել է «Հայկական մշակույթը Կարպատյան ավազանում» պատկերագիրք-գիտական ժողովածուն:

2019 թ-ին դոկտոր Կովաչը ցուցահանդես է կազմակերպել Բուդապեշտի Ազգային գրադարանում՝՝ նվիրված Աստվածաշնչի հայերեն հրատարակությանը:

Դոկտոր Կովաչը հայ-հունգարական հարաբերությունների զարգացման նվիրյալներից է: Նրա ակտիվ մասնակցությամբ է նաեւ ադրբեջանական կողմը ազատել 44-օրյա պատերազմից հետո Բաքվում պահվող հայ գերիներից հինգին:

Դոկտոր Կովաչը 2018 թվականից ղեկավարում է Բուդապեշտի Պազմանի համալսարանի հայագիտական ամբիոնը եւ հետազոտական աշխատանք է կատարում Լայպցիգի GWZO ինստիտուտում՝ պրոֆեսոր Ստեֆան Տրոբստի ղեկավարությամբ: Նա ազատ խոսում է հայերեն:

-Ձեր համալսարանում ե՞րբ բացվեց հայագիտական ամբիոնը եւ ե՞րբ Պիլիշչաբայից տեղափոխվեց Բուդապեշտ:

-2016 թվականի հոկտեմբերից հայագիտական ամբիոնը բացվեց նախ Պիլիշչաբա քաղաքի Պազմանի Պետեր կաթոլիկ համալսարանում՝ Հայաստանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի հետ համագործակցության ծրագրի շրջանակներում: 2019 թվականից ամբիոնը տեղափոխվեց Բուդապեշտ: Ըստ այդմ, մեր համալսարաններն իրականացնում են ուսանողների եւ դասախոսների փոխանակման ծրագրեր: Այդ հայագիտական ամբիոնի ղեկավարումը վստահվեց ինձ: Այս ամբիոնը հիմնադրելու գործում ինձ մեծ աջակցություն ցույց տվեցին իմ լավ գործընկերները Բեռլինից՝ էլկե Հարթմանն ու Վահե Թաշչյանը, ովքեր արդեն մեծ փորձառություն ունեին հատկապես Օսմանյան Կայսրության հայկական ժառանգության հարցերում:

Այնուհետեւ, մեր հայագիտական ամբիոնը Լայպցիգի ինստիտուտը եւ Կիլպէնկեան հիմնարկութիւնը եռակողմ պայմանագիր ստորագրեցին, ըստ որի Կիլպէնկեան Հիմնարկութիւնը ամեն տարի հինգ կրթաթոշակ է տալիս Բուդապեշտի կաթոլիկ համալսարանում հայագիտություն ուսանելու համար: 2020թ. սեպտեմբերից սկսել ենք նաեւ հայագիտական երկտարյա մագիստրոսական ծրագիրը, որի ավարտողները ստանում են հայագիտության դիպլոմ: Դա Կենտրոնական Եվրոպայում անգլերեն ուսուցմամբ հայագիտական դասընթաց է, որին կարող են դիմել նաեւ Հայաստանի ուսանողները:

-Ի՞նչ առարկաներ եք դասավանդում և ովքե՞ր են դասախոսները:

- Ես պատմաբան եմ, և մեր հայագիտական ծրագիրը սերտորեն կապված է «Պատմություն» ծրագրի հետ, որը, կարծում եմ, օգտակար է, քանի որ այն ուսանողներին հնարավորություն է տալիս սովորել մեթոդաբանություն: Պատմության ինստիտուտի ղեկավար, **պրոֆեսոր Շանդոր Օզեի** շնորհիվ մենք լիովին ազատ էինք ուսումնական ծրագրի մշակման հարցում, այնպես որ առարկաները ավելի մոտ են



Լուսանկարում՝ Պազմանի համալսարանի հրատարակած հայագիտական գրքերը

գլոբալ ուսումնասիրությունների տեսլականին, և ուսանողները հնարավորություն ունեն ուսումնասիրել հասարակական գիտություններ և զարգացնել իրենց գրականագիտական մտածողությունը: Այս պահին ինձ զուգահեռ Հայագիտության բաժնում աշխատում են իմ երկու գործընկերները՝ **դոկտոր Անատոլի Տոկմանցը** UCLA-ից (Լոս Անջելեսի Կալիֆոռնյան համալսարան) և **Սոսի Սուսանին,** ով դասավանդում է գրաբար, արևելահայերեն և արևմտահայերեն: Պատմության ինստիտուտի դասախոս-գործընկերները նույնպես դասավանդում են մեր բաժնում, իսկ մյուս ամբիոնների հետ համագործակցությունը նույնպես շատ լավ է:

-Շարունակո՞ւմ եք համատեղ ծրագրեր իրականացնել այլ Հայագիտական կենտրոնների հետ:

-Այո, իհարկե: Երբ ես հետ եմ նայում իմ անցած 20 տարիներին, ես տեսնում եմ, որ առանց միջազգային կապերի Լայպցիգում՝ «GWZO»-ում (Leibniz Institute for the History and Culture of Eastern Europe) հնարավոր չէր լինի հրատարակել մի շարք գրքեր, և, իհարկե, հնարավոր չէր լինի Հայագիտական ամբիոնի ձևավորումը Բուդապեշտում: Հայոց աշխարհն ու հայոց պատմությունը կապվածության մասին է, իսկ հայկական սփյուռքը, որպես անդրազգային երևույթ, միջազգային կապերի միջոցով դարձել է իշխող և ուժեղ: Այս պահին իրականացնում ենք «Lost-cities – Ani at the contested crossroads»(«Կորուսյալ քաղաքներ. Անին վիճելի խաչմերուկներում») նախագիծը՝ 300,000 եվրո արժողությամբ, որը մենք **էլկե Հարթմանի, Հակոբ Մաթևոսյանի և Կարէն Ձալլաթեանի** հետ նախագծել ենք, և որին այժմ միանում է նաև **Կոնրադ Սիեկիերսկին:** Հաջորդը, մեր ասպիրանտներից Լիլիթ Մնացականյանը գիտությունների թեկնածուի կոչում կստանա ոչ միայն Բուդապեշտում, այլ նաև Լայպցիգի համալսարանում՝ Co-tuttelle ծրագրի շնորհիվ: Հուսով եմ, որ մեր ասպիրանտ Լիլիթ Սաղաթելյանը, ով աշխատում է Նախիջևանի հայերի թեմայի վրա, կստանա նման հնարավորություն, քանի որ նա աշխատում է Հակոբ Մաթևոսյանի հետ Գերմանիայում: Մեր մի այլ ասպիրանտ Մարիաննա Մանասյանը, ում թեման կապված է հայկական կինեմատոգրաֆիայի հետ, հավանաբար, կհամագործակցի Ամստերդամի համալսարանի հետ: Հայերեն ծրագրերի շուրջ մենք նույնպես միասին աշխատում ենք, եւ ես շատ հեռանկարային եմ տեսնում համագործակցությունը Հրաչ Մարտիրոսյանի հետ, ում հետ աշխատում է մեր ասպիրանտ Ինեսսա Առուստամյանը՝ Երևանում գործող հայ լեզվաբանության և բարբառագիտության ակադեմիական ծրագրի շրջանակներում:

Կարևոր է նշել, որ հունգարական պատմա-բանասիրական հետազոտություններում եղել է ամուր պատմական կապ Գերմանիայի հետ, և դա տեսանելի է նաև մեր Հայագիտական ծրագրում, բայց մենք վստահ ենք, որ այն շուտով կամրապնդվի այլ երկրներում, հատկապես հաշվի առնելով ԵՄ գիտության ֆինանսավորման շատ մեծ հնարավորությունները:

-Ինչպե՞ս եք գնահատում հայագիտության վիճակը Հունգարիայում:

-Ես կասեի հետաքրքիր: Մինչեւ տասնիններորդ դարի սկիզբը Տրանսիլվանիայի հայերը երազանք ունեին հիմնելու հայագիտական ամբիոն: Դոկտոր Լուկաչ Պատրուբանին 1900թ-ին Բուդապեշտում հայկական լեզվաբանության վերաբերյալ հաբիլիտացիա է գրել: Վերջինս, սակայն մահացել է 1926 թվականին՝ առանց հետևորդների, առանց աշակերտների եւ առանց ամբիոնի:

Սոցիալիստական դպրոցի ժամանակ պրոֆեսոր Էդմունդ Շյուցը աշխարհահռչակ գիտնական էր թուրքագիտության եւ հայագիտության ոլորտներում: Եվ չնայած այն բանին, որ նա հայտնի պրոֆեսոր էր, այդպես էլ չկարողացավ հիմնել հայագիտական ամբիոն: Այսօր կան մարդիկ, ովքեր պրոֆեսոր

Լուսանկարներում՝ 2021թ Հունգարիայի միջնորդությամբ Ադրբեջանից 5 հայ գերի վերադարձան Հայաստան՝ նաեւ Բալինտ Կովաչի ակտիվ մասնակցությամբ

Լուսանկարում՝ Անատոլի Տոկմանցեւը, Բալինտ Կովաչը, Շանդոր Օզեն եւ Սոսե Սուսանին

էդմունդ Շյուցի աշակերտներն են: Ցավոք սրտի, նրա բոլոր աշակերտներից միայն դոկտոր Կոռնել Նադյն է, որ Հունգարիայի Գիտությունների ակադեմիայում լուրջ հետազոտություններ է կատարում՝ եկեղեցական միության ոլորտում: Միայն վերջինս ունի ասպիրանտի աստիճան եւ իր բազմաթիվ հրապարակումներում ևս Կոռնել Նադյը աջակցում է մեր ծրագրին, և մենք լավ համագործակցում ենք:

Մեր ամբիոնը ստեղծվել է ընդհանուր միջազգային համաձայնության արդյունքում: Այստեղ հատկապես ուզում եմ առանձնացնել ԵՊՄՀ-ի Պատմության ֆակուլտետի դեկան էդգար Հովհաննիսյանի և Երևանի պետական մանկավարժական համալսարանի ղեկավարության դերը: Առանց նրանց աջակցության Հունգարիայում ոչ մի համալսարան պատրաստ չէր լինի գնալու այս քայլին, և չմոռանանք, որ 2012-2022 թվականներին Հայաստանի և Հունգարիայի միջև պետական և դիվանագիտական հարաբերություններ դեռևս չկային: Մեր ամբիոնի ստեղծումը այսպես ասած «կոտրեց» այդ լռությունը:

Զավեշտալի է կամ գուցե նաև տխուր, բայց 2016 թվականին, երբ Պազմանի Պետեր կաթոլիկ համալսարանի ռեկտորը որոշեց բացել հայագիտության ամբիոնը, նույն տարում տեղի բուդապեշտահայերի մի խումբ որոշեց կազմակերպել այսպես ասած «կոնտր-հայագիտության բաժին»: Նրանք նույնիսկ հանդիպեցին մեկ այլ համալսարանի ղեկավարության հետ, և առանց ֆինանսական օգնության առաջարկեցին բացել հայագիտության երկրորդ ամբիոնը: Իհարկե, նրանց գաղափարը չստացվեց, բայց ես կասեի, որ այս պատմությունը բավականին ինտրիգային էր, կամ գուցե հայկական սփյուռքին բնորոշ դասական պատմություն է:

Շնորհիվ Պազմանի Պետեր Կաթոլիկ Համալսարանի, Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան և «Հունգարիան աջակցում է» (Hungary Helps) ծրագրի ֆինանսական օժանդակության՝ կարող ենք ասել, որ մեր Հայագիտության ամբիոնը աճում և հզորանում էր: Առաջին տարիներին մենք ունեինք տարվա կտրվածքով հինգ Կիլպէնկեան կրթաթոշակառու ուսանողներ Հայաստանից և Արցախից, ինչպես նաև հունգարացի ուսանողներից էին ամեն տարի միանում ծրագրին: Բացի այդ, մեր կողքին է միշտ եղել ականավոր գիտնական Ռազմիկ Փանոսյանը, ում վերաբերմունքը միշտ կայունություն էր բերում: Ծրագրի համար մենք շահեցինք հունգարացի շատ ուսանողների հետաքրքրությունը, հատկապես, երբ նրանց համար կազմակերպեցինք ուսումնական ճամփորդություն դեպի Հարավային Կովկաս: Պատմության ֆակուլտետի հունգարացի հայրենասեր ուսանողները տասնօրյա ուսումնական ճամփորդության ընթացքում հայտնաբերեցին հայոց պատմության հետաքրքիր պահերը, և նրանցից ոմանք սկսեցին նույնիսկ հայերեն սովորել, իսկ շատերը մագիստրոսական թեզ գրեցին հայոց պատմության վերաբերյալ, կամ որոշները ցանկացան ստանալ հայագիտության մեջ ասպիրանտի աստիճան եւ ուսումնասիրություններ կատարել: Նրանց հունգարական հայրենասիրությունը փոխվեց այսպես ասած հայկական հայրենասիրության:

Առաջին տարիներին դոկտոր էլկե Հարթմանը և դոկտոր Վահե Թաշճյանը Բեռլինից ամեն ամիս այցելում էին մեր ամբիոն, և նրանց ներգրավվածության շնորհիվ ամբիոնը ոչ միայն հաստատվեց, այլև դարձավ ավելի կայուն:

Պատկերացնո՞ւմ եք, թե Պազմանի Պետեր կաթոլիկ համալսարանում քանի այնպիսի ամբիոններ կային, ինչպիսին մերն էր, այն ժամանակ, երբ հումանիտար գիտությունները հիմնականում ճգնաժամի մեջ էին, հին ամբիոնները (օրինակ՝ լատիներենի, հին հունարենի կամ գեղագիտության պետք է փակվեին) և այդ նույն ժամանակահատվածում բացվում է հայագիտության ամբիոնը: Այսօր՝ 2023 թվականի դրությամբ, մենք ունենք բոլորովին այլ միջավայր՝ շնորհիվ Հունգարիայի կրթաթոշակային ծրագրի:

Իսկ այս տարվա սեպտեմբերից արդեն ունենք եռաստիճան ծրագիր՝ Պատմության բակալավրիատ, Պատմության մագիստրատուրա և Պատմության ասպիրանտուրա. այսինքն առկա են Հայագիտական մասնագիտացմամբ բոլոր ծրագրերը: Դա նշանակում է, որ Բուդապեշտում հայագիտությունը նման չէ այլ եվրոպական կենտրոններին՝ օտարերկրացիներին հայոց լեզու և բանասիրություն սովորեցնելուն, փոխարենը մեր ամբիոնը փորձում է քննադատական մտածելակերպ սովորեցնել հայ ուսանողներին: Սա նշանակում է, որ Արցախի, Սիրիայի, Լիբանանի և Հայաստանի մոտիվացված ուսանողների շնորհիվ մենք հուսով ենք, որ հայագիտությունը շուտով ավելի տեսանելի կլինի միջազգային գիտական կյանքում, քանի որ մենք փորձում ենք մեր ուսանողներին կապել միջազգային գիտական դիսկուրսի հետ և հնարավորություն տալ նրանց համագործակցելու ԵՄ տարբեր համալսարանների հետ:

Այստեղ՝ Բուդապեշտում, մեր գործընկերների փորձի շնորհիվ նրանք կարող են տիրապետել քննադատական մտածելակերպին և տարբեր հետազոտական մեթոդների, ինչպիսիք են կոնտեքստուալիզացիան եւ համեմատական մոտեցումը: Կարծում եմ՝ ազգային նեղ մտածողության փոխարեն այս կատեգորիաները և ռազմավարությունները այսօր կարևոր են բոլոր գիտությունների պարագայում, ինչպես նաև հայագիտության դեպքում:

Զրույցը վարեց Հ.Ասատրյանը

Պազմանի կաթոլիկ համալսարանի հայագիտական ամբիոնը՝ հայագիտությունն ուսումնասիրողների համար օրինակելի դարբնոց

Հանդիպումներ Պազմանի համալսարանի հայագիտական ամբիոնում

Հունգարական Պետր Պազմանի կաթոլիկ համալսարանում (Pazmany Peter Catholic University) 2016 թվականից գործում է հայագիտական ամբիոն, որը 2019 թվականին Պիլիշչաբա քաղաքից տեղափոխվել է Բուդապեշտ: Ամբիոնը գործում է Հումանիտար ֆակուլտետի Պատմության ինստիտուտում: Ամբիոնի հիմնադիր վարիչն է հայագետ, դոկտոր **Բալինտ Կովաչը:** Վերջինիս հրավերով սեպտեմբերի 18-ին **ՕՐԵՐ** ամսագրի գլխավոր խմբագիր **Հակոբ Ասատրյանը** եւ **orer.eu** կայքէջի գլխավոր խմբագիր **Աննա Կարապետյանը** հանդիպումներ ունեցան թե՛ ուսանողների, եւ թե՛ դասախոսների հետ: Հանդիպումն անցավ հետաքրքիր մթնոլորտում, ուսանողներն ու ասպիրանտները կիսվեցին իրենց տպավորություններով, իսկ դասախոսները պատմեցին իրենց փորձառության մասին:

Այս ամբիոնում այսօր սովորում են 50-ից ավելի ուսանողներ եւ ասպիրանտներ, որոնք ոչ միայն եկել են Հայաստանից ու Արցախից, այլեւ՝ սփյուռքից: Կան նաեւ օտարազգի ուսանողներ: Սա երեւի Եվրոպայում գործող երկրորդ ամենամեծ հայագիտական ամբիոնն է, Փարիզի ԻՆԱԼԿՈ-ն նույնպես ունի նման հարուստ ծրագիր:

Եվ ամենաուրախալի փաստն այն է, որ կողք կողքի հայագիտություն են ուսանում հայ եւ այլազգի ուսանողները: Այստեղ գործում է պատմության թե՛ բակալավրիատի եւ մագիստրոսական, եւ թե՛ ասպիրանտուրայի ծրագրեր:

Մեր հանդիպմանը ներկա գտնվեց եւ ողջունեց նաեւ Հումանիտար ֆակուլտետի դեկան **դոկտոր Նանդոր Բիրհերը:** Մեր այն հարցին, թե ինչպե՞ս է գնահատում հայկական ամբիոնի աշխատանքը, նա ասաց, որ իբրեւ քրիստոնյա երկրներ կարեւոր է նման համագործակցությունը եւ հայագիտության դասավանդումը նշանակում է, որ կարեւորում են միջազգային կապերը: «Իմ գործընկերն այս ամբիոնում շատ մեծ գործ են արել, եւ նկատելի է, թե ինչպես է ամբիոնը զարգանում: Այս ամենը շատ կարեւոր է, բայց նաեւ կարեւոր է, որ մեզ միացնում է քրիստոնեությունը: Այստեղ ամենակարեւորը դոկտորական ծրագիրն է եւ կարեւոր է, որ ասպիրանտները ղեկավար ունեն ոչ միայն մեզ մոտ, այլեւ մի այլ եվրոպական համալսարանում: Հույս ունենք, որ այս համագործակցությունը կշարունակենք եւ աղոթում ենք, որ Հայաստանում ամեն ինչ լավ լինի»,- ասաց դեկանը:

Հանդիպման սկզբում ՕՐԵՐ ամսագրի գլխավոր խմբագիր **Հակոբ Ասատրյանը** ներկայացրեց ամսագիրը, պատմեց պարբերականի ստեղծման եւ առաջիկա ծրագրերի մասին: Ամբիոնի գործունեությունը ներկայացրեց դոկտոր Բալինտ Կովաչը, նշելով, որ իրենց մոտ հայ ժողովրդի պատմության ուսուցմանը մոտենում են գլոբալ տեսանկյունից: Ապա ուսանողներն ու ասպիրանտները ներկայացրեցին իրենց հուզող հարցերը: Ստեփանակերտից բանասեր Ինեսա Առուստամյանը, Վանաձորից արվեստաբան Դիանա Ղազարյանը, Արցախից Աննա Գալստյանը եւ Մարիանա Մանասյանը, հալեպահայ Կարին Կոջայանը, Հայաստանից Գուրգեն Թադեւոսյանը եւ Արմինե Մնացականյանը, Հալեպից Մեղեդի Նալբանդյանը, Սարին Բազարբաշյանը, Երեւանից՝ Քրիստինե Բաղդասարյանը կիսվեցին իրենց տպավորություններով: Նրանց գերակշռող մասը նշեց, որ մեծ առավելություն է, որ դասախոսներն ունեն տարբեր փորձառություն, եւ նաեւ հաճախ են հրավիրվում այլ երկրների համալսարանների դասախոսներ, ինչը հարստացնում է առարկաների մասին ուսանողների իմացությունը եւ օգնում է նրանց տարբեր տեսանկյուններից մոտենալ իրենց հետաքրքող հարցերին: Ի դեպ, նրանք սովորում են հունգարերեն, եւ մի քանիսը արդեն մտածում են հունգար հեղինակներին հայերենի թարգմանելու կամ համեմատական աշխատանք կատարելու ուղղությամբ: Ուսանողները կարեւորեցին նաեւ գրաբարի եւ արեւմտահայերենի ուսուցումը, ինչպես նաեւ գիտարշավների կազմակերպումը, տպավորված էին Ռումինիա եւ Իտալիա այցերից: Նշեցին, որ ավելի առաջընթաց է նկատվում գիտության դասավանդման մեջ, ի տարբերություն Հայաստանի, ուր դեռեւս շարունակվում են խորհրդային ավանդույթները: Կարեւորեցին պատմության խորը

ՕՐԵՐ-ի խմբագիրների հանդիպումը ուսանողների ու դասախոսների հետ

Պազմանի համալսարանի հայագիտական ամբիոնի ունանդները, դասախոսները եւ Հումանիտար ֆակուլտետի դեկանը

ուսումնասիրությունը, քանի որ մատահիրավերները պետք է դիմագրավել ոչ միայն պատերազմի դաշտում, այլեւ պատմագիտության մեջ: Այնուհետեւ դոկտոր Կովաչը ներկայացրեց դասախոսներին: Կրասնոյարսկում ծնված եւ Ամերիկայում հայագիտություն ուսանած ռուս **Անատոլի Տոկմանցեւը** հայակական թեմայի հետ առաջին անգամ առնչվել է, երբ կուրսային աշխատանք է գրել ադրբեջանական Սումգայիթի հայկական ջարդերի մասին: Այդ օրվանից սկսել է հետաքրքրվել էթնիկ-ազգայնական հարցերով, ուսանել է Սանկտ Պետերբուրգի եվրոպական համալսարանում, մշակութային մարդաբանության ամբիոնում, թեզի թեման էր՝ «Սանկտ Պետերբուրգի հայկական եկեղեցին եւ նրա դերը հայ համայնքի կյանքում»: 2011թ առաջին անգամ գնացել է Հայաստան եւ 9 ամիս այնտեղ է ուսանել: Այնուհետեւ տեղափոխվել է Լոս Անջելես եւ 2015-2023թթ Կալիֆոռնիայի համալսարանում հայագիտություն է սովորել (ատենախոսության թեման՝ «Հետխորհրդային Հայաստանում աղանդների վիճակը»): Երեք շաբաթ առաջ է եկել Բուդապեշտ: Այժմ այստեղ դասավանդում է Հայ քրիստոնեության պատմություն ասպիրանտների համար եւ Համաշխարհային պատմության դասընթաց՝ մագիստրոսականի ուսանողների համար: Սահուն խոսում է հայերեն: Անատոլիի կարծիքով շատ կարեւոր է, որ դասերից զատ հանդիպումներ ու քննարկումներ անցկացնեն, հայագիտական ակումբ լինի:


Անատոլի Տոկմանցեւ

Սոսի Սուսանին 2018 թվականից աշխատում է այս ամբիոնում: Երեք կիսամյակ հայերեն է դասավանդել հունգարացիներին: Այժմ «Հալածյալ քրիստոնյաների օգնության» ծրագրի շրջանակներում գրաբար է դասավանդում: Նշում է, որ հատկապես սիրիահայերի համար շատ կարեւոր է այս ուսումնական ծրագիրը, քանի որ նրանց ուսման հնարավորությունները սակավ են: Արդեն իսկ իր ուսանողների օրինակով տեսնում է, թե ինչ մեծ առաջընթաց ունեն: Նրա կարծիքով, սա մի ամբիոն է, ուր գիտական մակարդակով հայերեն են սովորում: Նաեւ օտարներին են հայերեն դասավանդում: Կարեւորն այն է, որ ամեն մի դասախոս ունենալով բազմամշակույթային, գիտական լայն հորիզոնով ու գաղափարներով մտածելակերպ, նորովի է դասավանդում:

Սոսի Սուսանի

Կարէն Ձալլաթեանը, որը սփյուռքի գրականության մասնագետ է, 20-րդ դարի արեւմտահայ գրականություն է դասավանդում: 2019 թվականից սկսած դասավանդում է Վահե Օշականի, Գրիգոր Պըլտյանի գրականության մասին, անդրադառնում է նաեւ մշակութային հարցերի, կինոյին: Անիին նվիրված մեծ ծրագիր են իրականացնում, որի մասին կկարդաք մեր ամսագրի հաջորդ էջերում: Նրա ասելով, մինչեւ հիմա հայագիտության շրջանակներում բանասիրությունն է գերիշխել, տեսաբանական կամ քննական մտքի տեսակետից սահմանափակ ուսումնասիրություններ են արվել, միջմշակութային փոխանակումը հաշվի չի առնվել:

Բալինտ Կովաչը նշում է, որ կարեւորն այն է, որ հունգարացիները հայերեն են սովորում: Տրանսիլվանիայից ամեն տարի մեկ երկու ուսանող են գալիս: Նաեւ գիտաժողովներ են անցկացնում եւ տպագրում են ժողովածուներ, 5-6 գիրք են տպագրել:

Կոնրադ Սիեկիերսկին անդրադառնում է հայկական կրոնական ուխտագնացություններին՝ հատկապես Արեւմտյան Հայաստանում: Դրա մի մասն է կազմում նաեւ Անիի ծրագիրը եւ Կարենի հետ փորձում են պարզել, թե Անին ինչ նշանակություն ունի այսօր մարդկանց համար: Այնպես որ, այս ամբիոնում կատարվում է հսկայական աշխատանք, որպեսզի ուսանողները հնարավորություն ստանան ոչ միայն բազմաշերտ կրթություն ստանալ, այլեւ կողմնորոշվել, թե հայագիտության որ ճյուղն է իրենց ավելի գրավում: Իսկ դա վճռորոշ նշանակություն կունենա՝ արդյո՞ք կշարունակեն զբաղվել հայագիտությամբ, թե՞ այլ աշխատանքի կանցնեն, քանի որ հայագիտությունը պահանջում է նախեւառաջ նվիրում:

Հ.Ա.